

## Ի-Վի Քոնսալթինգ «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, Մարտի 4, 2014թ.

### ՄԱՍԼՈ ՉԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### 2013-2014թթ. Հայաստանի ազգային մրցունակության զեկույցի շնորհանդես

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը և «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը հրապարակել են Հայաստանի ազգային մրցունակության հինգերորդ զեկույցը՝ «Աճի հրամայականը և խոչընդոտները» թեմայով:

Չեկույցի թեման երկարաժամկետ և կայուն աճը զսպող առանցքային սահմանափակումների բացահայտումն է: Չեկույցը նպատակաուղղված է պետական և մասնավոր հատվածների միջև երկխոսության ձևավորմանը՝ նպաստելով աճի առանցքային սահմանափակումների վերացմանն ուղղված օրակարգի մշակմանը:

Արդյունավետ կառավարման հրամայականը ստիպում է առաջնահերթություններ սահմանել և առաջին հերթին կենտրոնանալ **առանցքային սահմանափակումների** վրա: Դրանք այն ամենաեական սահմանափակումներն են, որոնք մինչև չվերացվեն, այլ գործոնների բարելավմանն ուղղված ջանքերն անարդյունավետ կլինեն: Չեկույցը վեր է հանել **4 նմանատիպ սահմանափակումներ**, որոնց լուծման համար անհրաժեշտ է անհապաղ և արդյունավետ միջամտություն:

- 1. Մարդկային կապիտալի ցածր որակը:** Քանակական առումով Հայաստանը կրթված մարդկանց պակաս չունի: Աշխատուժի հետ կապված խնդիրներն արմատապես կապված են որակի հետ: Տնտեսության կողմից պահանջվող և ներկայիս կրթական համակարգի կողմից փաստացի առաջարկվող աշխատուժի որակների միջև էական ճեղքվածք կա:
- 2. Անկատար մրցակցային միջավայր:** Անարդար մրցակցային դաշտը և ստվերային տնտեսությունը ստեղծում են բազմաշերտ անբարենպաստ ազդեցություններ և՛ ընկերությունների, և՛ երկրի մակարդակով: Մրցակցային դաշտի առողջացումն ու բոլոր ընկերությունների համար հավասար դաշտի ստեղծումը կխթանեն Հայաստանում ձեռներեցության զարգացումը:
- 3. Հնարավորությունների բացահայտման պակաս:** Հայաստանի աճի հեռանկարներն անխուսափելիորեն կապված են արտահանման հետ: Արտահանման և ներդրումների ներկա կառուցվածքը չեն նպաստում արտահանման նոր հնարավորությունների բացահայտմանը և նորարարությունների խթանմանը: Արդյունավետ արդյունաբերական քաղաքականությունը պետք է միտված լինի նմանատիպ հնարավորությունների ստեղծմանը:

4. **Միաչափ ֆինանսական համակարգ:** Աճի հիմնական խոչընդոտը ֆինանսական համակարգի միակողմանիությունն է: Վերջինս թույլ չի տալիս ունենալ տնտեսության տարբեր հատվածների կարիքներին հարմարեցված բազմատեսակ գործիքներ: Տնտեսության աճը սպասարկելու համար անհրաժեշտ է ունենալ արդյունավետ և դիվերսիֆիկացված ֆինանսական համակարգ:

Առանցքային խոչընդոտների վերացմանն ուղղված պետություն-մասնավոր հատված փոփոխությունների օրակարգը ներառում է.

- **Գործունեության արդար դաշտի ստեղծում**
- **Արդյունաբերական քաղաքականության իրականացում**
- **Կրթության մեջ խոշոր ներդրումներ**
- **Ֆինանսական համակարգի զարգացում**

Ձեկույցը հրապարակվել է հայերեն և անգլերեն լեզուներով: Ձեկույցի էլեկտրոնային տարբերակները հասանելի են [www.evconsulting.com](http://www.evconsulting.com) և [www.ev.am](http://www.ev.am) կայքէջերում:

**Ի-Վի Քոնսալթինգը** գործարար խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է մրցունակության և նորարարության հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

**«Տնտեսություն և արժեքներ»** հետազոտական կենտրոնը հանդիսանում է Ի-Վի Քոնսալթինգի հետազոտական թևը: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը Համաշխարհային տնտեսական Ֆորումի Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունն է Հայաստանում:

**«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ**

[www.evconsulting.com](http://www.evconsulting.com)

[info@evconsulting.am](mailto:info@evconsulting.am)

**«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

[www.ev.am](http://www.ev.am)

[info@ev.am](mailto:info@ev.am)

Մելիք-Աղամյան 2/1,  
Երևան 0010, Հայաստան  
Չեռ.՝ +37410 546434